

ԳՐԱԿԱՆ

ԱՆՏԻՊ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ Ն Ա Յ Ա Պ Ե Տ Բ Ո Ւ Ս Ի Ն Ե Ա Ն Ի

ԼԱՄԱՌԹԻՆԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա Ն Մ Ա Հ Ո Ւ Թ Ի Ի Ն

Արեգական աւուրցս մերոց անդստին յուշարձոցն մթազնի-
հաղիւ ի վերայ խորշոմեալ ճակատուց մերոց արձակէ թրթռուն
շառաւիղս ինչ ի հերքել զգիշեր. ստուերն աճէ, տիւ մեռանի, ա-
մենայն ջնջի, բնան խուսափէ:

Յայս տեսարան քստմնի ոք արդեօք եւ մղձկեսցի. եւ սոս-
կացեալ յեզերոց գահավիժութեան յետս ընկրկեսցի. առանց զդո-
ղանի հարկանելոյ չկարիցէ լսել զմեռելոցն երգս տխրականս
պատրաստ ի հնչել, եւ զհեղձամղձուկ թառաչս տարփածուի ու-
րուք կամ եղբօր պահարկեալս զվերջաւորօք անկողնոյ մահու
նորա. կամ ողբերգակ պղինձն, որոյ ձայն աղօտահնչիւն՝ ազդ
առնէ մահացուաց թէ ոմն ի հիքացելոց բարձաւ ի միջոյ:

Յայգորեմ զքեզ, ո՛ մահ, երկնաւոր ազատարար. չունիս
դու ինձ յահաւոր կերպարանն՝ զոր երկիւղ կամ մոլորութիւն
ընծայեցին քեզ ընդ յոլով ժամանակս. բազուկ քո ոչ եւս է զին-
եալ համայնաջինջ սրով. ո՛չ եւս խոժոռի քո ճակատ. աչք քո ոչ
եւս է դրուժան. գթած ոմն աստուած է քեզ առաջնորդ առ ի ցա-
ւոցն նպաստ. ո՛չ տանիս յոչնչութիւն՝ այլ ազատես. ձեռն քո,
հրեչտակդ երկնառաք, բարձեալ ունի ջահ աստուածային. այն
ինչ աչք իմ պարտասեալք յառին ի լոյս՝ դաս դու յանարատ եւս
տիւ ողողել զիմ արտեւանունս. եւ յոյս առ քեւ՝ մտախորհ ի վե-
րայ շիրմին, յեց ի հաւատ, գեղեցկագոյն եւ ինձ բանայ աշխարհ:

Ե՛կ ուրեմն, ե՛կ ի խզել զմարմնեղէնս իմ շղթայ. ե՛կ, բա՛ց
զարգելարանս, ե՛կ, տո՛ւր ինձ զքո թևս, զի՞ յապաղիս, երևեա՛ց,
հուսկ ուրեմն ստացայց յանձանօթ էակն կոյս՝ որ սկիզբն է իմ
եւ վախճան: Ո՞ գիս ի նմանէ ի բաց ուժացոյց: Զի՞նչ եմ ես, եւ
զի՞նչ լինել մնայ ինձ. ես մեռանիմ, եւ չգիտեմ թէ զի՞նչ արդեօք
ծնանիլն իցէ: Դո՛ւ, զոր ի զուր հարցանեմ, ոգի՛, հի՛ւրդ անծա-
նօթ, մինչչեւ էր քո կենաւործեալ զիս, յո՞ բնակէիր. ի դիւրեղ-
ծական յայս գունդ ո՞ր զօրութիւն արկ զքեզ. ի կաւակերտ յայս
վնտան ո՞ր ձեռն արգել զքեզ. որո՞վք հրաչակերտ հանգուցիւք,
որո՞վք գաղտնի պատշաճութեամբք մարմինն զքէն ունի, որպէս
և դու զմարմնոյ: Զի՞նչ այն օր է, որ զհոգի անջատիցէ ի նիւթոյ:

Եւ վասն որպիսեաց՝ նոր պպարանից թողցես դու զերկիր: Մոռացա՛ր դամհնայն, Եւ անդր քան զչիրիմ՝ դնամ դու վերստին ծնանիլ ի նոր մոռացոնս. նմանատիպ կենաց սկիզբն առնել զնա աղեօք, կամ թէ ի վայելս մշտնջենաւոր իրաւանցդ ըիմես ի ծոց Աստուծոյ, յաղբիւր քո եւ ի հայրենիս, յամենայն մահացուացն աղատացեալ ի կապոյ: Այո՛, այս է իմ յոյս, ո՛վ դու կէս կենաց իմոց. արդէն իսկ ոգի իմ հաստատութեամբ եւ առանց դողման վաղ ուրեմն վասն նորա կարաց տեսանել ի կախարդիչ ի զիմացն դժգրութիւնս թօշնիլ պերճափայլ երանգոցն դարնայնոց. վասն նորա է զի դեռ մանուկ գոլով, հարեալ ի նետէ՝ որ զիս յօշոտէ, ի մահ մօտեալ զէման իմ տեսանեն ժպտաք, եւ ի վերջին հրաժեշտ մեր եւ ի վերջին ակնարկիսն՝ արտօսը ուրախութեան պղպղեն յաչս իմ:

Սնտոի՛ յոյս, գողեսցէ գրոհն Եպիկուրեայ. եւ նա՛ որոյ ձեռն ի յօշուած բնութեան պարապեալ՝ ի նորոգ ստորագրեալ անկեան ուրբը ուղղոյն տեսանէ զխորհել նիւթոյն, եւ զոգոցն բուսանիլ: Ասիցեն նքա. անմիտ, որ ի մեծի՛ ամբարտաւանութեան ի պատրանս եւ ըմբռնեալ, հայեանց շուրջ գգեւ. ամենայն ինչ սկսանի եւ ի գործ դայ եւ տեւէ ի վախճան ինչ. եւ ամենայն ծնանի առ ի մահ. ի դալկահար յայս բուրաստան տեսանես ըզժաղկանց թօշնիլ, տեսանես յանտառս զմայրն բարձրայօն, որ ընդ տարեացն ծանրութեամբ ճնշի, եւ անկեալ յորսացսի ի վերայ դալարեաց. տեսանեօ զծովն սպառիլ ի չորացեալ ծովափուննս. եւ նոյն իսկ երկինք սկսանին նուաղիլ. այս աստղ՝ զորոյ ժամանակն ծածկեաց զծնունդ, արեգակն իբր զմեզ ի նուաստութիւն զիջանի, եւ մահացուք թափառեալք յերկինս ամայացեալս՝ ինդրեսցեն զնա յաւուր միում, եւ ո՛չ տեսցեն զնա. շուրջ գգեւ յամենայն ի բնութեան տեսանես՝ զի դարք կուտակեն հողս ի հողոյ վերայ, եւ զԺամանակն՝ ի մի եւ եթ քայլ զքո վեռութիւնդ դամօթի հարեալ տեսես լեալ ի դադաղ ամենայնի արտադրելոցն յիւրմէ: Եւ մարդ, այլ միայն մարդ, ո՛վ վսեմ խօլութեանս, կարծէ ի խորոց անտի իւրոյ շիրմին վերստին գտանել զկեանս, եւ մրկկարաղիս տարեալ յոյնշութիւն ի ձեռն ժամանակի տկարացեալ՝ գլաւիտնիցն անրջէ:

Այլ ձեզ այլ ոք տացէ պատասխանի. ո՛վ իմաստունքդ երկրի, յիս թողէ՛ք զիմ պատրանս. սիրեմ, եւ յոյս կարեւոր է ինձ. բան մեր խոսովեալ տկար չփոթի: Այո՛, լո՛՛ք բանն, այլ բնածին ազդումն տայ ձեզ պատասխան: Այլ ես մինչ յերկնային տեսանեմ զաշտին զաստեղան յիւրեանց անստերիւր ուղւոյն մօլորեալս, եւ յեթերեան հարթ ի վայրսն առ ի միմեանց մղեալս բաղդովի բնթանալ ընդ երկինս շուարեալ, յորժամ լսեմ զողբս եւ ըզբեկումն երկրի, յորժամ տեսանեմ զգունտ նորա անոք եւ վտարանդի տատանեալ ծփեալ հեռի յարեգականց, զեղծեան յողբ առեալ զմարդ՝ անհետ լինել ի հովիտս մշտազիչերս, եւ յորժամ վերջին վկայ աղէտալի տեսարանացս, յանկերպարան նիւթոյ պարառեալ, ի մահուանէ եւ ի մթոյ՝ միայն ես կացից կանգուն, եւ առ իմօվ սարսափելովս՝ միակ էա՛կ անվրէպ եւ բարի՛ ի քեզ յուսացայց. եւ անկասկած ընդ վերադարձ անանց առաւօտուն՝ քեզ սպասեցից ի վերայ աշխարհացն խանգարելոց:

Յիշես ապաքէն, զի յերանաւէտ յայտ ի բնակութեան՝ ուրանոր ի միողէ և եթ ակնարկութենէ ծնաւ սէր մեր անմահ, յոյով անգամ ընդ քեզ ի խորս միտէաք յայսպիսեաց մթութեանց, մերթ ի կատարս հինաւուրց ժայռից, և մերթ յանբնակ աիտունս տիրուր լծից, թեւ զգեցեալ զտարփանաց, հեռի թոռացեալ յաշխարհաց։ Ստուերք յերկարածիդ ծալուածս ելեալք ի լերանց՝ զարտորայս գողանային յաչաց մերոց ընդ դոյզն և եթ վայրկեան ժամանակի. այլ անդէն վաղվաղակի անձայն և անմռունչ յառաջ ընթացեալք խորհրդական դասակք աստեղաց գիշերոյ՝ տան մեզ զիրան քողարկեալս ի մերմէ տեսութենէ, և փափուկ նշողիւքն պատեն զտարածութեամբ՝ ճորճոյ օրինակաւ. այսպէս և ի մեր սուրբ տաճարս յարփոյն լուսոնկալս մինչ երեկորին շառաիդք հետզհետէ խամբանան, զամբարն ծաւալեալ զիւր նշոյլ աստուածապաշտ՝ զսրբարանն ամփոփ ևս լնու լուսով։

Յայնժամ ի գինէհար շամբուութեան քում զիմ այս յածեցուցանես, յերկնից յերկիր՝ ածեալ, և անդրէն յերկինս վերաբերեալ, և ստես. ծածկեալ՞ լո Աստուած, քեզ ի տաճար է բնութիւն. յո՛ր կողմն սք մեր զփտեցէ՝ ոգիք զքեզ տեսանեն, և քոց կատարելութեանց՝ որում հասու լինել ցանկան մեր միտք, այս աշխարհ է ճաճանչ և պատկեր և հայելի. սիւ է քո հայեացք, և գեղեցկութիւն՝ քո ժպիտք. սիրտ յամենայնի քեզ երկրպագէ, և հոգի առ քեզ հառաչէ. յաւիտենական, անվախճան, ամենակալ և համայն բարի այս կողմունք անսահմանք ոչ դնեն սահման քո անուան, և միտ մեր ընկճեալ ընդ գերագոյն գոյութեամբ քով, ի լուսութեան իսկ իւրում զքոյդ հոչակաւ տօնէ զմեծութիւն։ Այլ րակայն, ո՛վ Աստուած, ըստ վսեմական օրինացն իւրոց՝ այս ոգի ընկճեալ հարուածեալ՝ տակաւին առ քեզ սլանայ. և գիտացեալ եթէ իւրոյ գոյին վախճան է սէր՝ անժուժկալ ի սիրել՝ այրի տենչիւ ի սիրել։

Աւէիր, և սիրտք մեր միախառնէին զիւրեանց հառայմունս առ էակն անծանօթ, ի վկայութիւն փափաքանաց մերոց, առաջի նորա անկեալ ի գուճս, սիրելով զնա ի գործս նորա, առաւօտ և երեկոյ տանին առ նա զմեր յարգանս. և աչք մեր պշուցեալք գիտեն մերթ յերկիր ի վայր մերս արտասահմանութեան, և մերթ յերկինս ի բնակութիւն նորա։ Բարէ՛, եթէ ի ժամանակս յայսոսիկ՝ յորս ոգին վաղանցուկ սրանայ, և պատառել կամի զծոցն՝ որ ի կապանս է նմա և ի գերութիւն, այս Աստուած ի բարձանց երկնից տուեալ պատասխանի փափաքանաց մերոց, միով ազատարար բաղիմամբ գերկոսին զմեզ հա՛ր միանգամայն. հոգիք մեր միով ոստամբ յաղբիւր անդր իւրեանց ելեալք՝ միաքայլ ընդ աշխարհ անցցեն յնթացս իւրեանց. ընդ անձոնն, ի վերայ թեւոց սիրոյ ելցեն հեծեալք իրբեւ գշտաաւիղս տունջեան, և մինչեւ առ նոյն ինքն Աստուած հասանելով խոնջք և պարտաաւեալք՝ ի ծոց նորա գյաւիտեանս ժամանակաց միախառնեսցին. այս տարփանք խարէ՛ն զմեզ արդեօք. էքս ոչնչի՞ց իցեն սահմանեալք, և վասն անդոյից ծնեալք. և հոգւոյն հաղորդ յեալ վիճակի պահպանակին իւրում մարմնոյն, կլեա՛լ արդեօք լիցի ի գիշեր չիբիմ. անկցի՞ ի փոշի. կամ ի ցնդիլ պատրաստեալ որպէս ձայն որ ո՛չ եւս իցէ, ի լուծանե՞լ երթիցէ։ Յետ սնտոի հառաչանաց և

վանձ հրաժարանաց չիցէ՞ ինչ արդեօք... Աղէ՛, զմեծէ դադար-
նութենէս առ քեզ միայն հարց- տե՛ս Ե՛լլիրա, զի տարփածուն
քո մեռանի, եւ տո՛ւր ինձ պատասխանի:

Հ Ո Վ Ի Տ

Սիրտ իմ սաղտկացեալ ի յամենայնէ եւ ի յուսոյ իսկ ան-
դամ, ոչ եւս գնասցէ յուխտս իւր թախանձ բաղդին արկանելւ. շը-
նորհեա՛ ինձ միայն, ո՛ր հովիտ մանկութեանս, տեղի ինչ ապաւի-
նի առ մի օր անդ ի մահուն սպասել:

Ահաւաստիկ շաւիղ անձուկ որ ընդ ձորն տանի ընդ մթազին,
եւ առ կողիւք բարձրաւանդակացս կախեալ ստուար անտառաց,
որ խոնարհեալ ճակատուս զստուեր միախառն, քող զինեւ արկա-
նեն զլուութեան եւ զխաղաղութեան:

Անդանօր, վտակք երկուք գաղեալք ընդ դալարադեղ կա-
մըրջանս գծաագրեն ի սողոսկիին՝ զշրջանակս հովտին. եւ ընդ պահ
մի զիւրեանց խառնեալ զալիս եւ զմրմունջ, եւ ոչ այնչափ ինչ հե-
ռացեալ յիւրեանց ականէն՝ կորնչին անանուն:

Չօրինակ նոցին աւուրցս աղբիւր հոսեալ գնաց. էանց նա
անշշունչ, անանուն եւ անդարձ. արդ ականակիտ զծոցոյն տեսա-
նեմ ալիս, այլ իմ հոգւոյս պղտորելոյ չիցէ բնաւ ցոլացուցեալ
պիտազիւրն աւուր ինչ չքնաղ:

Չովութիւն նոցին դաշտաց, եւ ստուեր նոցին պսակադիր
չլթալակապ զօրն զողջոյն զափամբք արգելուն զիս, եւ իմ հոգի՝
զօրէն մանկան օրրելոյ ի միաձայն ինչ երգոյ, զանուշ քնով գայ
անդոյր՝ ախորժեալ ընդ մրմունջ ալեաց:

Ո՛վ երջանկութեանս. անդանօր՝ ինձ ցանկալի է յաւէտ՝
չուրջ պաշարեալ ի դալարեաց պատնիշարար ի յեղերդից իսկ ի
կշիռ ակունս եղբրեւոց, զետեղեալ պնդել զիմ քայլս անդանօր, եւ
առանձինն ի բնութեան լսել ինչ ոչ քան զալիս, եւ ոչինչ քան զեր-
կինս տեսանել:

Կարի իմն տեսեալ է իմ, եւ յոյժ զգացեալ, եւ ի սէր ան-
չափս զեղխեալ առ կենօք իմովք. արդ իմ զալուստ ի խնդիր է ան-
պորութեանն Լիթեան. տենչալի վա՛յրք, լիբուք ինձ յայն ափու-
նըս ուր ի յուշոյ ի բաց վանել զայն մարթ է. մոռացօնք եւ եթ՝ են
յալամհետէ ինձ յերջանկութիւն:

Թանգորրու է սիրտ իմ եւ ի լուութեան հոգի իմ. բստ ժա-
մանել սպառի հեռաւոր բոժբիւն աշխարհի իբրու զձայն հնչեալ
ի հեռուստ զոր նուաղեցուցանէ միջոց, եւ ի հոգմոյ վարեալ բեր-
եալ ի տարաամ լսելիս եւ անստոյգ:

Աստի տեսանեմ զկեանս ընդ մէջ ամպոց անյայտ լինել վա-
սըն իմ ի ստուեր անցելոյն. սէր միայն եկաց որպէս կենդանի մը-
նայ միայն յեղծեալ անուրջս պատկեր ինչ մեծ եւ երեւելի յես
քան զարթնութիւնն:

Հանդի՛ր դու, հո՛գի իմ, յայտ վերջին ապաստանարան,
զտիպ բերեալ ի քեզ եւ զմանութիւն ուղեգնացի, որ սիրտ լի յու-
սով նստի առ դրօք քաղաքին յառաջ քան զմուտն, եւ շնչէ պահ մի
զանուշահոտ օդ երեկորին:

Իրրու զնա, յաւից մերոց թօթափեսցուք զփոշի. չի՛ք մարդոյ բնաւ անց առնել կրկին ընդ այս ճանապարհ. շնչեսցո՛ւք իրրու զնա ի ծագ ասպարիզին զայս անդորրու թիւն գյառաջընթացն յաւիտենից խաղաղութեան:

Աւուրք քո կարճ եւ մթինք որպէս աւուրս աշնայնոյ հոյովին իրրու ստուեր ի զառ ի վայրս բլրոց. բարեկամութիւն քեզ հանդիսանայ մատն (իչ) եւ դաւաճան եւ գթութիւն երեսս դարձուցանէ ի քէն. եւ էջս առնես դու միայնիկ ընդ շաւիղ գերեզմանաց:

Այլ անդ է բնութիւնն որ հրաւէրս մատուցանէ քեզ եւ սէր. բնկղմեաց ի ծոց նորին զոր բանայ քեզ միշտ: Մինչ ամենայնն փոփոխի վասն քո, բնութիւն նոյն իսկ է, եւ նոյն իսկ արեգակն ծագէ ի վերայ աւուրց քոց:

Ի լոյս եւ ի հովանիս պատէ զքեզ տակաւին. ի քաց քերեա՛վ զքո սէր ի սուտ բարեաց քոց կորստական, եւ պաշտեա՛ւ աստ զարձագանգն զոր պաշտէր Պիթագորաս, եւ ընդ նմին մատո՛ր գունկն քո ի լուր եթերեան ներգաշնակութեանց:

Ե՛րթ ի յերկինս զհետ տունջեան, եւ զսուերին ի յերկրի. ի դաշտս օդոց սրացի՛ր ընդ Հիւսիսի, եւ ընդ քաղցր շառաւղաց խորհրդական լուսաւորին սպրդեաց՝ ընդ մէջ ծառատնկոցն ի ստուեր հովտին:

Աստուած, առ իմանալ զայն, արար զիմացութիւն. գտանէ նա հուսկ ուրեմն զարարիչն իւր ընդ բնութեամբ, եւ ձայն ինչ խօսակից լինի ընդ հոգւոյս ի լուութեան իսկ անդ իւրում. եւ ո՞ արդեօք չլուաւ դայս ձայն յիւրում սրտի:

Յ Ի Շ Ա Տ Ա Կ

Ի զուր յաջորդէ օր աւուր, եւ սահին անհետ եւ աննշան. այլ յիմ հոգւոյս ջնջէ ինչ ոչ զքեզ, ո՞ վերջին անուրջ սիրոյ:

Ձամս իմ տեսանեմ զոր ընթաց կուտակել զկնի իմ, որպէս տեսանէ կաղնի չուրջ զիւրեւ զանկումն իւրոց տերեւաց:

Ապիտակացեալ է ճակատ իմ ի ժամանակէն. եւ հազիւ հոսէ արիւն իմ ցրտացեալ, նմանեալ կոհակին զոր արգիլէ սառուցիկ շունչ հողմոց:

Այլ մատաղ դէմք քո փայլուն, զոր մորմոք եւ զիղջ գայ ի գեղեցկացուցանել յաւէտ, չունի բնաւ գծերութիւն տեսանել յիմում ծոցի, նման հոգւոյ՝ չիք նմա բնաւ ամք տիոց և ժամանակի:

Ո՛ւ, չէ լքեալ քո զիմ աչս, եւ մինչ հայեցուած իմ միայնիկ կասեաց ի տեսանելոյ զքեզ ի վերայ երկրի, յանկարծ ի յերկինս դէպ եղեր իմումս տեսութեան:

Անդանօր երեւեցար ինձ տակաւին յայն կերպարանս յորս եղեր դու յաւուր վերջնում, մինչ յերկնային քո բնակարան թռար զու ընդ աչալրջոցն:

Ամբիծ ի գեղեցկութիւն եւ սրտառու ի յերկինս իսկ եկն զկնի քո, աչք քո, յորս շիջանէր դամպար կենաց, զճառագալթս արձակեն զանմահութեան:

Եւ զեփիւռին շունչ սիրարկու տակաւին ի վեր ամբառնայ

գերկարաձիգ զքո հերս, եւ ալիք նոցին ծածանեալք անկանին ի վերայ ծոցոյդ ի հիւսս իրենեան:

Ստուեր առագաստիս անհաւաստի ամոքէ տակաւին զդէմս քո իրբու այգ որ մերկանայ ի վերջին քօղոյ առաւօտին:

Երկնային բոց արեգականն դայ ընդ աւուրց եւ խուսափէ. իմ սիրոյս ոչ գոյ գիշեր, եւ դու փայլես միշտ ի հօգւոյս վերայ:

Դու ես զոր լսեմ, զոր տեսանեմ յամայնս եւ ի յամպս. ալիք ցոլացուցանեն զքո դէմքն, եւ զեփիւռ առբերէ ինձ զքո ձայն:

Մինչ է երկիր ի նինջ քնոյ, ի լսելս իմ զհառաչ հողմոյ, ինձ դայ հաւատալ թէ քո մրմունջ զբառից սրբոց ի լսելիս իմ մերձի:

Եթէ հիանամ ընդ այս հուրս ցանեալս որք յառագաստս սփռին գիշերաց, տեսանել հաւատամ զքեզ յիւրաքանչիւր աստեղ որ յաւէտ գեղանի յաչս իմ ցուցանի:

Եւ եթէ շունչ զեփիւռին զմայլէ զիս բուրմամբ ծաղկանց, ի քաղցրագոյն անուշահոտսն զշունչ քո շնչեմ:

Ձեռն իմ ցամաքեցուցանէ զիմ արտասուս, մինչ երթամ ես տրտմաթախիծ եւ մենաւոր տարածել զաղօթս իմ գաղտնաբար մերձ ընդ տաճարսն արգահատիչ:

Այն ինչ ննջեմ ես, հսկես դու ի ստուերին. թեւք քո հանգչին յիմ վերայ, եւ իմ անուրջք համայն գան զքեւ ուրախ եւ անոյշ քան զստուերիւ ակնարկեսն:

Եւ եթէ ձեռինդ, յընթացս քնոյս, էր լուծեալ արդեօք զաւուրցս իմ ստախօ, ո՞վ դու երկնային կէս հօգւոյ իմոյ, երթեալ էր իմ իսկ արդեօք զարթմնիս ողջունել ի քում ծոցիդ:

Իբրեւ գերկուս շառաւիղս այդուն եւ իբրեւ գերկուս հառաչանս խառնեալս հոգիք մեր զոյգք զմի եւ եթ յօրինէն հոգի, եւ ցարդ ես հառաչեմ:

Յ Ա Փ Շ Տ Ա Կ Ո Ի Թ Ի Ե Ն Մ Տ Ա Յ

Այսպէս, մինչ արծուին որոտման յերկինս ամբառնայր գԳանիմէդոս, մանուկ յարեալ ի յերկիր գօտեմարտիկ հանդիսանայր ընդդէմ հաւուն աստուածոց. այլ սեղմեալ արծուոյն յարագ յիւր ճիրանս գերկիւղալից նորին զկողմն ահարեկ կորգէր թափէք զայն ի հայրենի դաշտավայրէն՝ եւ խցեալ զականջնս ի լուր ձայնին աղերարալի արկանէր զայն՝ դեռ ահափես եւ զողջողուն, մինչեւ ի յոտս անմահից:

Սոյնպէս, այն ինչ թափ խոյանաս դու ի վերայ իմ հոգւոյս, ո՞ր յափշտակութիւն յաղթական արծուի, յաղաղակ թեւոց քոց բոցեղինաց հարկանիմ զդողանի ի սուրբ արհաւիրս, եւ ընկճեալ ընդ քո իշխանութեամբ փախչիմ զանգիտեալ թէ ներկայութեան քո մի՞ գուցէ տարցէ յոչնչութիւն զսիրտ մահացու, իբրեւ զհուր ի շանթից վառեալ, որ ոչ եւս գիտէ շիջանիլ, այլ ծախեալ սպառէ զփայտակոյտն, զմեհեանն եւ զտաճարն:

Այլ խոյանացն խորհրդոց ի նանիր հակառակի բնատուր ազդումն զգայութեանն. ընդ աստուծով ճնշեալ սաստիկ հոգի իմ ոստեու, սրանայ, բաղխէ զիմ ծոց. շանթ կայծական շրջանս առ-

նու յերակս իմ, եւ իմ մաշեալ զարհուրեալ յանձինս կիղիչ ի հր-
րոյն գրգռեմ զայն ի զայրոյթ ի զէգ կեկեալ ընդ նմին, եւ հիւթ
ողւոյս յորդեալ արտաքս յուղիս ներդաշնակաւորս մաշէ զիս ի
խուսափիլն:

Նկատեա՛մ եւ տես զգոհ քո, ո՞ր Մուղայ. ճակատ ոչ եւս է
քաջագոր, հայեացք ոչ եւս վսեմ որ արձակէ ճառագայթ ինչ սրբ-
բազան. ընդ սպառիչ ազգուութեամբ քով հաղիւ մնացորդ ինչ
գոյութեան խոյս ետ ի մանկութենէս՝ ճակատ իմ եղծեալ տպա-
կանեալ ի դեղնութենէ չպահէ ինչ եւս քան զչաւիղ կայծական որ
զիս եհար:

Երանի՛ր անզգայ բանաստեղծին. չէ՛ բնաւ վիճն նորին թագ-
եալ յարտասուս եւ անդոյր նորին յափշտակութեան զիրկ եւ ան-
բարձ բնաւին յայց եղերերգու կատաղութեանց. եւ յերակէ նո-
րին ամբիժ եւ յորդառատ հոսին թուով եւ չափու կաթին վտակք
եւ մեղու. եւ այս երկչոտն Իկար դաւածանեալ ի Պինտաբեանն
թեոյ ո՛չ եւս արկանի յերկնից:

Այլ մեք, առ հրակէզ առնել զհողիս, այրել պարտիմք եւ
ի յերկնիցն նախանձարեկ կորզել ի բաց զեռապատիկ բոցս նորին.
ի նկարագրել զամենայն՝ զգալ պարտ է զամենայն. եւ սիրտք
մեր՝ հրափայլ զամպարք լուսոյ, ամփոփել պարտին զճառագայ-
թրս համայն բնութեան. եւ ամբաստան է զմերոյս կենաց այլ այս
ջահ մեր նախանձելի ի կրիցն վառի ի հրոյ:

Ո՛չ, բնաւ արգանդ ինչ խաղաղական ած երբէք ի ծնունդ
զերկնային պայս ուժգին խոյանս եւ ոչ դարձեալ զխառնակութիւն
պայս համակրական որ զաշխարհ ընդ երգովք մերովք նուածէ:
Ո՛չ, ո՛չ, մինչ Հոմերեանն Ապողոն ի ձգել զիւր նետս յերկիր, ի
բարձանց իլանէր Երիբասայ, թռուցեալ յափունս զժոխրմբերս
արբուցանէր զօրհասական եւ զգժնդակ զէնսն յեռացեալ ջուրց
Ստիքեայ:

Իջէ՛ք, յօգոստեան բարձանց գերապանծ, որոց անարժան
հանդիսանան մեղկ եւ վատին բռնութիւնք կրից. ի մեծափառ իմն
նուագարանէ ելանեն եթերեան ներդաշնակք ձայնից, եւ քնարից
մանկանց սիրտ զտիպ բերէ եւ զմանութիւն մարմարիտին հա-
ուաչողի որ ի դամբարան Մեմնոնի, եւ առ ի տալ նմին զձայն եւ
զհոգի՛ պարտ է զի ակն տունջեան յողջախոհ իւր բոցոյն արկղէ
նմին զճառագայթ ինչ:

Եւ դու կամ կամ զի դեռ զարթուցիկ ի հրոյ ընդ մոխրով
ծածկելոյ մնացորդ հոգւոյս ցնդեսցի ի շէշտս ձայնից ընդ օդս
անհետացեալս: Փառք է անուրջ ստուերին. նա՛ կարի նուազեաց
զթիւ աւուրց որոց պարտն էր պարգեւել գեղեցկութիւն: Կամ իս
դու զի պատարագ նմին մատուցից դայս շունչ կենացս. այլ ես ի
սիրել կամ իմ զայն պահել:

Յ Ո Ի Ս Ս . Հ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Այն ինչ Արարչին բան արգասաւոր յաղետալի իմն ժամու,
դաշխարհ ի սերմանց խառնակութեան ծնաւ, դարձոյց զերես իւր

յանկատար իւրոց գործոց, եւ արհամարհանօք ոտնահար ընկեց-
եալ զայն ի տիեզեր, եմուտ անդրէն յիւր հանգիստ:

Ե՛րթ, ասէ, թշուառութիւն անձինդ զքեզ աւանդեմ. յոյժ
անարժան դու յաչս իմ սիրոյ կամ սրտմտութեան, յոչինչ ես դու
առաջի իմ. գլորեմ/ց ըստ բաղդին հաճոյից յամայիս դատարկու-
թեան, եւ քեզ հեռի յինէն ճակատագիր լիցի առաջնորդ, եւ թըշ-
ուառութիւն՝ թագաւոր:

Ասաց, որպէս անգղ որ խոյանայ ի վերայ որսոյ իւրոյ,
թշուառութիւն, ընդ այս բան, բարձրացոյց ի ցնծութեան նշան,
թառանջ իմն երկարածիդ. եւ ճնշեալ զտիեզերս յանագորոյն յիւր
ճիրանս, զանանց իւր ժանս կատարութեան յինքն դբաւէ զմշտա-
տեւն սնունդ:

Չարիք յայսմհետէ յանհուն իւրեանց իշխանութեան թա-
գաւոր իցեն. եւ յայսմհետէ ամենայն որ խորհի եւ շնչէ անկաւ-
ընդ կրիւք, եւ երկիր, եւ երկին, եւ հողի, եւ նիւթ, ամենայն հե-
ծէ եւ ձայն բնութեան չեղեւ այլ ինչ քան երկար հառաչումն:

Ամբա՛րձ ուրեմն յեթերական դաշտավայրս զբո հայեց-
ւածս, խնդրեա՛ զԱստուած ի գործս իւր, եւ ի նեղութեան քում
յմխիթարիչ զայս մեծ յօգնականութիւն քեզ կարողա՛. ողորմելի՛,
բարութիւն իւր հեռի է ի գործոց իւրոց. զգօրավի՛զն քո ինդրես-
քեզ տիեզեր զհալածիչդ կացուցանէ յանդիման:

Յո՞ր անուն զքեզ յորջորջել, ո՛վ զօրութիւն աղետալի-
կոչեսցեն զքեզ ճակատագիր, բնութիւն, վերին տեսչութիւն, ա-
նիմանալի օրէնք. եթէ դողացեն ընդ ձեռամբդ եւ եթէ հայհո-
յեսցեն դնս, եթէ հպատակեալ եւ եթէ ապստամբեալ, եթէ երկի-
ցեն ի քէն եւ եթէ սիրեսցեն զքեզ, միշտ յարածամ դու ես:

Ո՛վ թշուառութեանս, որպէս զքեզ կարգացի եւ զյոյս ինձ
յօգնութիւն. ոգի իմ զառանցեալ ըմպէ զուարճութեամբ զթունա-
ւորիչ հրապոյրսն. այս այն է որ զմերս մղեալ զբայս ի յանդուռ-
ղըս, զարդու եւ ծաղկամբք պսակէ զոր թշուառութեան յանձնէ ի
ձեռս զգնելիս:

Գոնէ բաղդովի տասանորդէր զմարդիկ, կամ ձեռն նորա
անկանէր ի վերայ ամենեցուն ցորչափ հաւասար օրինօք վարիմք.
բայց դարք տեսին զողիս վեհանձնեայս, զգեղեցկութիւն, զհան-
ձար, կամ զառաքինութիւն վսեմականս, ի պատարազ մատուց-
եալ նորին ընտրութեան:

Որպէս, մինչ աստուածք անմեղ հօտից ի զո՛հ խնդրէին
զարինաչաղախ երախայրիս յանագորոյն յիւրեանց մեհենս, հա-
լիւր ցլովք կազմէին զհարիւրզոհեանն պատարազ, եւ գտնն ամ-
բիծ, կամ աղաւնի՛ն սպիտակ գտածարս նոցա պարտէրէ:

Արարի՛չ ամենակարող, սկի՛զրն համայն եղերոց, դու, առ
սրում գոյ հնարաւորն մինչչեւ եկեալ ի գոյութիւն, անհնից ար-
քա՛յ, կարէիր արդարեւ ըստ հաճոյից փափաքանացդ հանել վա-
սըն մանկանց քոց զերջանկութիւն եւ զկեանս ի յաւերժութենէ
քումմէ:

Առանց երբէք սպառելոյ, ի վերայ ամենայն բնութեան
կարէիր առատահոս ծաւալել առանց չափու երջանկութիւն ինչ
բացարձակ. տիեզերք եւ կարողութիւն եւ ժամանակ, ոչի՛նչ

յայտացանէ աշխատ առնէ զքեզ. ո՛հ, սարսափի բանն իմ. անշուշտ կարող էիր դու ընդ այն, բայց ո՛չ կամեցար:

Ձի՞նչ մեղս յանցեաք արդեօք առ արժանի լինել ծնանելույ. անզգայն ոչնչութեան ինդրեա՞ց արդեօք ի քէն զայն, կամ ընկալա՞ւ զայն արդեօք. հաճոյի՞ցդ իցեմք արարք, ո՛վ բարդդ, կամ յաւէտ, Աստուա՛ծ անադորոյն, առ երանութիւն քո վշտաց մերո՞ց պէտք էին:

Ելէ՛ք ուրեմն յերկինս, ելէ՛ք, խունկզ զոր սիրէ. Թառա՛չք, արտասուք, հեծեծա՛նք, հայհոյութի՛ւն, ուրախութի՛ւնք, ներդաշնակութի՛ւնք եթերականք, գոչի՛ւնք արեան, ձա՛յնք մեռելոց, բողո՞քք անշիջանելիք, ելէ՛ք, երթա՛յք զանզգայ կամարս ուպարանից բաղխել վերին տեսչութեանց:

Երկի՛ր, ամբարձ զքո ձայն. երկի՛նք, տուք պատասխանի. անդո՛ւնդք, ընակութի՛ւն աղջամղջին ուր կուտակէ զիւր զենլիս մահ, կակա՛ն բարձէք. բողոք իմն յաւերժական կացցէ դատախազ զընութենէն, և մորմոք՝ համայն տացէ մի ձայն ի հեծել:

Յօրէ, յորում բնութիւն յոչնչութենէ կոչեալ, ել ի ձեռացդ իրբեւ զործ ինչ ուրուական, զի՞նչ տեսեր յայնմ ժամուպիւթ նուաճեալ ընդ անկարգութեամբ չարեաց, եւ զամենայն մարմին ի հեծութիւն համակեալ, ո՛հ, եւ համայն կեանք նախանձորդ լեալ ոչնչութեան:

Ձառաքինութիւն ընդ անպատուհաս ընկճեալ ժպրհաւ, զստախօսութիւն ի պատիւ, եւ զճշմարտութիւն վտարանդի, զազատութիւն թափառական՝ ի զոհ կենդանի աստուածոց աշխարհի մատուցեալ. եւ զգօրութիւն զանիրաւութեան յամենայնի հիմնեալ զանսահման թագաւորութիւն:

Չարութիւն առանց աստուածոց վճիռ հատեալ զմարտից. զկատույն զոմն ինքնիշխան զընդերս պատառեալ տակաւին յաւուր Պղատոնի: ՁՊուիւդոս զոմն, որ զանձն ի կշիռ դնէ վասն առաքինութեան զոր սիրէ, ի վերջին անդ վայրկենի կասկածի գնոյն իսկ զառաքինութենէն, եւ ասէ. անուն լոկ ես դու եւ ո՛չ այլ ինչ...:

Չբարդ միշտ մեծագոյն չարութեանցն կուտակից, զոճիրս թաղադիրս լեալ օրինաւոր. զփառս յարեան զին. զորդիս ժառանգս ապիրատութեան հարց. եւ զդար յոգւոց պարզել ապաստանեալ, պատմելով նորածին դարուն զիւր աղետ:

Եւ զի՞, այսչափ խոշտանգանք, եւ անիրաւութիւնք, եւ վիշտք, չետո՞ւն արդեօք թախձագին քոց տաճարացդ ծխել զգոհս բաւական: Այս արեգակն՝ հին վկայ աղէտիցն երկրի, ո՞չ ծնցի զմի եւ եթ տիւ որ գտառապանս մահկանացուացն չլուսաւորեսցէ:

Ժառանգք վշտաց, զո՛հք կենաց, ո՛չ, ո՛չ, մի՛ յուսայք բնաւ եթէ կատաղութիւն իւր ծարաւի արկցէ թմրութիւն զթըշուառութեամբ. մինչևե մահ, բացեալ զանհուն զիւր թեւս, կլցէ ի սպառ ի մշտատեւ լուութիւն զյաւերժականն կսկիծ:

Հրտ. Ա. Գ.